ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2016 թվականի N 292-Ա

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության 2016 թվականի բյուջեից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կարիքների համար <<ք. Նոր Հաճնի թիվ 3-րդ դպրոցի վերանորոգում>> աշխատանքների կատարման նպատակով հատկացված միջոցների հաշվին վերանորոգված օբյեկտի ընդունելու և շահագործման հանձնելու նպատակով՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել <<ք. Նոր Հաճնի թիվ 3-րդ դպրոցի վերանորոգում>> ավարտված շինարարական օբյեկտի ընդունող հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1) ***Տարոն Գևորգյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ,

2) ***Երվանդ Հակոբյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ,

3) ***Նարինե Վարդանյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նոր Հաճնի N 3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն,

4) ***Գրիգոր Հալաբյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման գլխավոր մասնագետ (համաձայնությամբ):

2. Հանձնաժողովում ընդգրկել նաև կապալառու, տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության ներկայացուցչին (համաձայնությամբ):

3. Հանձնաժողովին՝ տեղում ուսումնասիրել ավարտված շինարարական օբյեկտի համապատասխանությունը հաստատված նախագծային և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և ներկայացնել համապատասխան ակտ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի դեկտեմբերի 15
ք. Հրազդան